



ԹԱԳՈՒՆ ՈՃԻՐՆԵՐ

ԱՊՏԻԼ-ՀԱՄԻՏԻ ՉԷՐՉԻՈՒԹԻՒՆԸ

ԻՐԱԿԱՆ ԿԵԱՆՔԷ

Գրեց՝ Տ. Ս. ՇԵՓԻԿԼԵԱՆ

Մուկ



ՄԱՏԵՆԱԿՐԱՆ
ԳՐԻԳՈՐ Գ. ՏՅՂԱՐԵԱՆԻ
ԱՍՆԹԱԳ - ՀՅՂԱԳ - ՊԵՐՈՒՅԷ
ԴԱՍ Ե. ԹԻՎ 105

Կ. ՊՈԼԻՍ

Տպագրութիւն Ռ. ՍԱԳՍԵԱՆ

1909



202

ԱՌ՝ ԳՈՐԾՎԱԳՈՒԹ ՄԱՅՐՆ ԻՄ.

ՏԻԿ. ԼՈՒՍԻԱՅ ՇԵՓԻԿԼԵԱՆ

Ի ՆԱՆ

Խորին Երախտագիտութեան :

Ա. ՊՏԻԻԼ-ՀԱՄԻՏԻ

ՁԵՐՁԻՈՒԹԻՒՆԸ



Ձեռ կրնար գտնել բառ մը որով, կարենամ որակել, մեծ մարդասպանին յատկութիւնները, ստորին ու վայրաքարչ նկարագրով շողուած այս ինկած արարածը, ամէն ինչ որ սրիկայական էր, ինչ որ վայրենի էր. ինչ որ հակամարդկային էր, ինչ որ հայրենիքի կը վնասէր, բոլորն ալ կը տեսնուէր իր խանութուածքին մէջ:

Այսքան ստորին նիւթերով շողուած և ցած հողում միացած մարդակերպ դազան մ'էր:

Իր դահակալութեան շրջանին Փարաւոններու, Ներոններու, Յաղկերտի, Վասակի, Լէնկթիմուրի նման աշխարհաւեր ճիւղողներու քար կլլեցուց միշտ գերազանցելով իր վատ արարքներուն մէջ, ջարդեր կաղձակերպեց. անմեղներու մահավճիռներ սարքեց, շարունակ իր հպատակներուն, գլուխ ծոռողներուն հանդէպ:

Անոնք որ, դուրկ էին ինքնապաշտպանութենէ, անգթաբար սպաննեց, անխղճօրէն խեղթեց, դաւեց, դաւաճանեց, երկիրը ծախեց, Օամ. փառքը նսեմացուց, գեղեցիկ քաղաքները քանդեց, աղնիւ ձիւրքերը ոչնչացուց, շարունակ ուսմիկ խուժանէն մղուեցաւ, անասնական կիրքերու գերին եղաւ, զօրաւորին հանդէպ քծնեցաւ և իր

մէկ չնչին քմահաճոյքին դոհացում տալու համար ամէն նուիրական բան դոհեց :

Ամբողջ երկիրը կտրատելով, սահմանները պզտիկընկլով մնացածն ալ աւերկոյտի մը վերածեց և Երլարզ կոչուած ոճրագործութեան բոյնին բարձունքէն դիտեց ու հրճուեցաւ ժողովուրդներու իրարու հանդէպ՝ գործած, եղբայրասպան անգիտակից ոճիրները :

Գազանային այն արարքները իր յղբացումի սահմանը չունեցաւ . մինչև, ինկած օրն իսկ արիւնի վրայ կոխկոտեւելով դուրս ելաւ ոճրագործութեանց այդ ամբիթատրոնէն . արցունքի ու արիւնի հեղեղի մ'ալ խուլ ձայնը լսեց Կիլիկիայի անմեղ հայերուն խոր հառաչանքին ուրուականը իր ետեւէն քաշկուտեց :

Այս հրէշին նման մէկը մինչև ցարդ պատմութեան մէջ չգտնուելով մարդկային միտքը չէ կրցած բառ մը ստեղծել որով զինք որակէինք . հետեւաբար, իր այս չարագործութեանց քառութիւնը Սաղայելին և Սանդարամիտին ձգելով առանց Համիտավայել լուտանքներու տեղատարափ մը յղելու իր հասցէին սոսկ իր կեանքի առու ծախի խնդիրներէն փոքրիկ մանրավէպ մը կը ներկայացնեմ ընթերցողներուս զորս 16 ձիի փոխարէն ամբողջ երկիր մը մարդու մը քմահաճոյքին կը յանձնէ անխղճօրէն :

Պատմութիւնը զոր գրի կ'առնեմ բուն իսկ այն մարդուն բերնէն լսած եմ որ այդ ձիերը տալով Չհոլ Գօմանսանիի ախողոսը առած էր . սակայն հակառակորդը աւելի զօրաւոր ըլլալով գերակշռած ասոր ոյժը և զինքը բանտը նետած էր . ուրկէ պատեհութիւնը ունեցանք այս հետաքրքրական պատմութիւնը լսելու :



1904 Մայիսի վերջերն էր : Արտասովոր իրարանցում մը , խուճապ մը կը տիրէր բանտին մէջ : Կարտիաններն ու ժանտերմէները իրար անցած միշտ հրամաններ կը կատարէին . բանտին տնօրէնը կարճ լիկ մարդ մը հասակին նման մաքով ալ կարճ թափթփած ցատկոտուքներով փանթօլոնը վեր վար քաշելէն կ'երթար կուզար կարևոր գործ մը կատարողի երևոյթը տալով ինքնիրենին : Այս իրարանցումը մեզի դուշակել կուտար արդէն տարօրինակ դէպք մը և կամ բարձրաստիճան սղաշտօնեայի մը բանտը այցելութիւնը : Քիչ վերջը կուսակալին տղան բանտը եկաւ և 10 բողէի չափ տնօրէնին հիտ տեսակցելէ վերջը մեկնեցաւ : Այս այցելութիւնը աւելի հետաքրքրութիւնս կը գրգռէր . հարցուփորձ կ'ընէ պատճառը հասկնալու սա կայն . ոչ ոք բան մը զիտեր իրականութեան վրայ միայն հաւանականութիւնը կար բարձրաստիճան մէկու մը բանտարկութեանը : Անհամբերութեամբ կսպասէի դէպքերու ելքին և երբեք չէի հեռանար սենեակիս դռնէն . որ , տնօրէնի սենեակին ճիշտ քովին էր : (Երկուք ու կէս օսկիով կրցած էի այդ սենեակը բնակիլ իրբև քաղաքական յանցաւոր բացառիկ շնորհ մը) Ուշադրութեամբ կ'ունկնդրէի տնօրէնին սենեակին մէջ եղած խօսակցութիւնը : մին կըսեր .

— Չօք զեմկիմ սրլար :

ուրիշ մը .

— Չօք վերկիլի իմիլեր :

երբորդ մը .

— Պի՛ր ազ եաղլանըրդ :

չորբորդ մը .

— Պարե՛ չօք գալսալար :

Որոշապէս հասկցայ որ նոր բանտարկեալ պիտի գայ : Անպիտանները իրենց Պաւլէն կուլային և միւնոյն հոգեկան տրամադութիւնը կը կրէին այն տէրտէրներուն նըման երբ հարուստ մեռելի մը հոտը կառնեն :

Ամենայետին պաշտօնեան իսկ , լաւ ուսումնասիրած էր մարդակերպ-մարգակեր վեհապետին քաղաքականութիւնը : « Դժբաղդութիւնները արհամարհել և ուրիշներու դժբաղդութեանը մէջ իրենց չահը նկատել : »

Քիչ վերջը սէր կարտիանը զիս կը կանչէ հրամցնելով տնօրէնին սննեակը , տնօրէնը կարմրելով :

— Էֆէնտի , նազըմ փաշան (կուտակալը) հիմա զիս կանչած էր . պատուիրեց որ առանձին սննեակ մը պատրաստեմ . Արաբ նշանաւոր երկու ցեղապետներու համար . որոնք , այսօր Մերտինէն հոս կը բերուին : Տնօրէնին քրծնողական ձևերէն կուտեցի ըսելիքը սակայն , մտիկ կընէի :

— Կը ներեք , էֆէնտի , որ , ըսեմ թէ ընկերներովդ քովի սննեակը կը հաճիս փոխադրուիլ ես դարձեալ պէտք եղած հոգածութիւնը ունիմ քու վրադ : Ուզածիդ չտի նորէն ազատութիւն կուտամ վեր վար պտտելու :

Չ'պատասխանեցի ակնապիշ երեսը կը նայէի անշուշտ ըսել ուզելով թէ՛ դեռ նոր տուինք երկու քուկէս ոսկին ու հազիւ ամիս մը մնացինք : Փարիզի արարթըմաններէն աւելի սուղ :

Տնօրէնը գուշակեց ըսելիքներս և ամիջապէս յարեց
— Ինչ ընեմ տղաս, աս այսպէս է և ուրիշ կերպ չեմ
կրնար ընել :

— Բայց մենք որ . . .

Խօսքս բերանս թողուց .

— Է՛հ, հատկեցայ ես ամեն բան գիտեմ բայց քեզի
ուրիշ կերպ բարիք կրնեմ :

Թէպէտ երկուքուկես ոսկին նոր տուած՝ և այս
կարգադրութիւնը քիչ մը ծանր էր բայց ի՛նչ օգուտ .
համակերպելէ զատ ուրիշ բան չէինք կրնար ընել : Ու-
րե՛մն անմիջապէս փոխադրուեցանք քովի սենեակը :

*
* *

Պատուհանէն կը դիտէինք և ահա 150 ձիաւորներէ
շրջապատուած շէյխի տարազով Արաբական ձևով երկու
մարդ բանախ դռնէն ներս կը մտնեն ուրիշ անօրէնը զի-
րենք ընդունելով կ'առաջնորդէ ա՛յն սենեակը զոր մենք
պարսպ ձգած էինք :

Կէս ժամ վերջ քովերնին կ'երթամ հրաւիրելու այդ
օրուան ճաշին որ իբր նորեկ մը և պանդուխտ մը, պար-
տականութիւն կ'զգայի պատուել զիրենք : Սիրայօժար
ընդունեցին հրաւերս : Մին քառասուն-քառասունըհինգ
տարեկան աղերեկ մազերով մօրուսաւոր ազնուականի
որոշ գծերով Մուսլիթ փաշա անուն Միջագետի մէջ
ընակող շաւուր Աշիրաթին ցեղապետն էր : Իսկ միւսը
Շամմար Աշիրաթին նշանաւոր Յարիս փաշայի, որ Մուսու-
լի մէջ կախուեցաւ որդին, Համիյտի պէյն էր : Բոան

տարեկան երիտասարդ մը որ առնական ամեն առաւելութիւն ունէր, կայտառ և առոյգ . բայց դժբաղդաբար կռուի ժամանակ իր մէկ աչքը կորսնցուցած էր : Ասոնք իւրաքանչիւրը 15-20 հազար հոգիի վրայ կ'իշխէին :

Սեղանը պատրաստած էնք նահապետական դրութեամբ . ճերմակ սաւան մը, փռելով դետինը . մէջտեղը դրած էինք փիլաֆը և շուրջը զատ զատ պնակներու մէջ պամֆայի կերակուր նաև լաւաշ հանցեր առատ քանակութեամբ , անպայման կերպով նահապետական սեղանի մը վայելուչ ճոխ մածուն, թան և պանիր : Մեր ցեղապետները որոնք երկար ատենէ ի վեր կերելիքան չէին կերած այնքան դո՛ մնացին այս հրաւերէն որ առանց հրամցնելու թեւերը սոթթեցին և ինկան փիլաֆին կողերը , մնչդեռ ընկերներէն մին դգալ և պատառաքալ կը հրամցընեն , ժպտելով յայտարարեցին թէ՛ ամօթ է ցեղապետի վր համար այդպիսի բաներով ճաշել :

Շատ ուրախալի ժամանցներ ունեցանք Յրկու օրի չափ . Արարական սուրճի աւանդական ճէզուէն երէք չէր պաղեր : Սակայն երրորդ օրը մեր հիւրերը կերելի ճանապարհի յօգնութեան ազդեցութեան տակ այս զսպուած կեանքը անտանելի դալով իրենց՝ տկարութեան նշաններ ցոյց տւին . ազատ ապրող այս լեռնցիները կուզէին համա կերերպիլ այս կեանքին և երբէք՝ դժգոհութիւն չէին ցուցունէր . Մուսլիթ փաշան միայն , անգամ մը յիշեց իր 13 տարեկան կինը որ գեռ նոր Նղետիներու գեղուհիններէն առեւանգած էր : Այս մարդը թարգմանի պաշտօն կը կատարէր Համլիտի պէյին , որովհետեւ երբէք թուրքերէն չէր գիտէր իսկ սա տարիուկէս Յըտըզի հիւրանոցը մնա-

լով բաւական սորված էր թուրքերէնը . Համիյտի պէշ
շատ անգամ հանաքի ձեւով կըսէր թէ՛ փաշան այլա-
սեռած է :

Վավաշոտ փաշան իր դեռատի կնօջ յիշատակովը .
իսկ Համիյտի պէշը նժոյզներուն, դէնքերուն և ազատ
լեռներուն կարօտովը չկրցան շատ տոկալ բանտի միօրինակ
կեանքին և չորրորդ օրն իսկ հիւանդանոց փոխադ-
րուեցան :

Հիւանդութիւնները ամնշան բաներ էին բայց հիւանդա-
նոց փոխադրուելէն 1 օր վերջ Համիյտի պէշին դիակը
դուրս հանուեցաւ . բսուեցաւ թէ՛ դեղ մը լամած և 2
ժամ վերջը արիւն փոխելով մեռած էր հէզ երիտասար-
դը :

Նշանաւոր աւազակապետ և միլլի Աշիրաթին պետ
համրաթէ զօրադունթերէն միրլիսլայ Իպրահիմ փաշան,
բժիշկին 500 ոսկի տալով, ազնիւ երիտասարդը թունա-
ւորած էր . այսպիսի վայրագ վրէժխնդրութիւն մը կա-
տարելով, իբ դարաւոր քէնն ու ոխը լուծելով, բանտի
չորս պատերուն մէջ :

Մուպիթ փաշան ասոր ի տէս ամիջապէս հիւան-
դանոցէն ելնելով սենեակ եկաւ . այս անգամ մեզ ալ
ընդունելով իր սենեակին մէջ, իբր սենեակակից :

*
* *

Փաշան հակառակ իր դիրքին հեզահամբոյր ընաւո-
րութիւն մ'ունէր . այնպէս որ, մտերմաբար ամեն ինչ կը
հարցուփորձէի . իրենց սովորութիւնները, բարքերն ըն-

տանեկան կեանքը և ամեն ինչ որ կ'ըսէր ինծի համար նորութիւն մ'էր : Այսպէսով օրերնիս դիւրութեամբ կը սահէր : Սուգի օրերուն յաջորդած էր խաղող կեանք մը և գրեթէ մոռացումի մէջ թաղած էինք Համլյտի պէյլին թունաւորումը և ինքնամոռացումի մէջ կապրէինք : Մինչև ցարդ ո և է հարցաքննութիւն եղած չէր տակաւին . և փաշան շէր գիտէր թէ՛ ինչո՞ւ համար բանտարկուած է միայն Մերտինի կարավարիչը դաւադրութեամբ մը գերեմք հրաւիրած և իրատէի մը համաձայն ձերբակալելով Տիգրանակերտի բանտը դրկած էր :

Իրենց ձերբակալութենէն 15 օր վերջ՝ ուսամորթ Ապիտ մը հետեւեալ նամակը բերաւ փաշային , որ սապէս կը գրէր :

Յարգելի փաշա՛ ,

Իպրահիմ փաշան իր տանն և հինգ հազար հաւալիներով (*) յարձակեցաւ Աշիրաթին վրայ և ինչ որ կար ոչնչացուց : Ոչխար արջառ , ուղտ , ձի և վերջապէս ամեն բան թալանեց : Իսկ անձի կորուստ չափազանց է : Դաւադրութեամբ մը եղբայրդ Ջուպան ինչպէս նաև միւս շէյխերը նմանապէս Շամմար , Ֆէտտան , Էնազէ Աշիրէթներուն ցեղապետները ու շէյխերը , իր տունը հրաւիրեց և անոնց բացակայութենէն օգտուելով , այս ձիւնը մեր գլխուն բերաւ : Շամմար , Ճպպուր , Ֆէտտան , Էնազէ Աշիրաթները չկան այլևս , բոլորն ալ ոչնչացան և Իպրահիմի ազդեցութեանը տակ են : Աանհամբեր Ձեր հրաման-

(*) Աւագակապետին զինուորները ճավալէ կը կոչուին որ քիւրտերէն ընկեր ըսել է :

ներուն կապասեմ : Հարեմին հետ փախած ենք թէպէտ
բայց վայրկեանէ վայրկեան վտանգի կապասենք :
Նամերտ Իպրաիմին հրոսախուժբերը արձակ համարձակ
կը շրջին :

Սպասուորդ

Ա.ՊՏՈՅ

Նամակը կարդացած ատենս իւրաքանչիւր բառ խեղ-
ճին սրտին վրայ դաշոյնի պէս կը մխուէր : կը տեսնէի որ
հէզ կալանաւորը կը դողդղար . կը դեղնէր , կը կապուա-
նար որոնք իր ներքին յուզմունքը և անսահման զայրոյ-
թը կը մատնանշէին : Շղթայուած առիւծի մը հողեկան
վրդավմունքը կը կրէր : Այն կակձալի տեսարանին ի տես
մեղքայ և արդահատանքի երկու շիթ արցունք սահե-
ցան այտերէս , կը դիտէի ու չէի կրնար խօսիլ . բառ մը
չկար որով մխիթարէի զինքը : Ջիղերը պրկուեցաւ և
ջղածդական սարսուռկի մը մէջ հազիւ սա խօսքերը
սառի բերնէն .

«Երնգըր, քեաֆիր, քեազիպ, Մեյունն : Ա՛խ Հա՛միս,
Համիս, սէն երզսըն օնաղը մը : Օնաղըն քօր օլսուն
պա՛րէս »

Քիչ մը օշարակ ևլն . խմցնելէս վերջ մարդը սթա-
փեցաւ և քիչ մը հանգստանալէն վերջ սկսաւ պատմել
այն անցուղարձերը զոր Ապտիւլ Համիտի և իր մէջ տե-
ղի ունեցած էին և այսօր արիւնոտ առդանցուժով մը ,
վերջակեալը կը դրուեր այն երեւակայական փառքերուն
որոնք Համիտի ստախօս շրթունքներէն առատօրէն շրայ-
լուած էին :

«Ասկէ մոտաւորապէս երկու քուկէս տարի առաջ, Իպրահիմի շահատակութեանց այլևս չկարենալով տոկալ, որոշեցի ճար մը խորհիլ: Բարեկամներէս մին թելադրեց որ Սուլթանը կաշառեմ. որով թէ Իպրահիմի զրկանքներէն զերծ կը մնամ և թէ՛ պաշտօնի մ'ալ անցնելով, տուածիս փոխարէնը կարճ միջոցի մէջ ժողովուրդին կոնակէն կը հանեմ: Այս խորհուրդով Ա. Քարտուղար Թահսին փաշայի միջոցաւ դիմում ըրի թէ՛ կուզեմ նորին վեհափառութեան զստոյիցը նուէր մը ներկայացնել և խնդրեցի որ, այդ իմաստով իրատէ մը շնորհուի: Ամիս մը չանցած իրատէն ելած էր եւ ես ալ զանազան թանկագին իրեղեններու հետ մեկտէղ տասներկնց հաս ընտիր նոյնքներէս զատեցի որոնց իւրաքանչիւրը մէկ-երկու հարիւր տարուան ցեղագրական վաւերութիւնները ունէին. մանաւանդ զոյգ մը էրմոշի ցեղէն նոյնքներ կային որ Պէյրութի Անգլ. հիւպատոսը 1600 ոսկի տուաւ ու տակաւին չտուի: Վերջապէս քսան հազար ոսկւոյ նուէրով մը ներկայացայ և սիրով ընդունուեցայ կայսերական հիւրանոցը: Պօլիս հասնելէս ամիս մը վերջ իրատէ մը կը հաղորդէր թէ՛ միրլիխայութեան աստիճան տուած էր ինծի: Այս իրատէին վրայ տարիուկէս սպասեցի առանց ո և է նոր հրահանգ մը ստանալու ակնկալութիւններս ջուրը ինկած էին և խօստու մնները բոլորը սուտ: Տարիուկէս վէրջը նոր իրատէ մը ևս կը հաղորդէր թէ՛ իբր Ձեզ Գօմանցաճի ախողոսով և 50 ոսկի ամսաթոշակով պէտք էր որ մեկնէի. հարկ եղած պաշտօնական հրամանները Ձօրի միւքեսարութեան պիտի գրուէր: Մեկնեցայ: Տուն դալէս վէրջը քանիցս Ձօր դիմում ըրի ու ասակա-

ւին հրահանգ մը եկած չէր : Քիչ վերջն էր որ Մէրտինէն հրահարուեցանք և մեր բանտարկութեան հրամանը պարունակող իրատէն հաղորդուեցաւ : Ասոր վրայ, այդ դողաւ բող Իդրահիմին բրած ջարդն ու թալանը որոշապէս վերլուծել կու տայ ինդիբը և իրականութիւնը արեւի պէս մէջակողն է :

«Պօլիս հասնելէս վեց ամիս վերջը, Իպրահիմը Սեվերէկցի հորիւ բապետ Էօմէր աղայի հետ 1000 թէնէքէ իւղ կը զրկէր Ապտիւլ-Համիտի ըսուեցաւ թէ՛ ատոր հետ միասին մեծաքանակատակ ալ զրկած է : ան այս էր պատճառը որ իմ տուած նուէրներս գերակշռեցին Իպրահիմի զրկածները և վատ Սուլթանը իւր շուայլած խոտառամները զայցիւ իրագործել և հիմայ այսպէս թակարթի մը մէջ ձգելով ոչնչացուց զիս և ամբողջ Աշիրաթը : Արդ՝ իրաւունք չունիմ զայն ՎԱՏ, ՉԱՐԱԳՈՐԾ, ԱՊԵՐԱԽՏ, ՍՏԱԽՕՍ կոչելու որ, այսպէս անխղճօրէն ոչնչացուց ամբողջ ցեղս) » :

Իրաւունք ունիք լիաշա, գոչեցի, ինչ որ ըսէք կը վայլէ այն աշխարհաւեր դաղանին, որ անամօթարար երկիրը անհասնե՞րու քմահաճոյքին կը յանձնէ :

Փաշան լուսեց և այն լուսթիւնը մէկուկէս տարի տեւեց մինչև որ Իպրահիմ զինքը իր գերիշխանութեանը տակ սուած ազատ արձակելու նոր իրատէ մը հաղորդեց :

Փաշային անէծքները իրագործուած են այս օր և Համիտի ալ օճախը քէօր եղած է : Բանակալութեան կուռքը կործանեցաւ բայց ո՛ւր են Պոսնա-Հէրսէքը, ո՛ւր է Արեւելեան Բուժիւրին, ո՛ւր է Կարօ, Արտահան Պաթում, ո՛ւր են Նդիպտորը, Կիպրոսը, Կրէտէն : Ասոնք

Համրաի վաճառականութեան մէջ կորսնցուցածներն
Ուրի՛նն նաև Անատուրի բարգաւաճ քաղաքները, Միջ
գետի Արար և Քիւրա ցեղերու բազմաթիւ ոչխարն
ու առջարներն Հայաստանի և Կիլիկիայի զարգացե
Հայերը, Պօլսեցի զարգացեալ սպաները չկան: Աստ
ալ Համրաի Չերչութեան մէջ կորսնցուցածներն և
Ուրե՛մն, Համրա ամեն ինչ ըստ վերջ, ստոր
ՉերՉի մ'ալ էր որ խօսք կու տար և չէր յարգէր:



ԳԱՍ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0329302

Մյուս
1145^ա

Մամուլի ասի ևն Հեղինակին միւս գործերը

1. ԼԼԿՈՒԱԾԸ
2. ԹԱՀՍԻԼՏԱՐՆԵՐԸ

ԳԻՆ 1 ՂՐՇ.



1145 / 1145